# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՀՆԴՁ/2024/Հ-13 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 3 | կիսաճտքավոր կոշիկներ | Ծանոթություն- տվյալ ապրանքը ապրանքային նշան չունի | Ծանոթություն- տվյալ ապրանքը մակնիշ չունի | «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ | Սև գույնի, բնական կաշվից, 1,3-1,5մմ հաստությամբ: Բաղկացած է երեսամասից, միջնատակից, հիմնական ներդիրից, հանովի-դնովի ներդիրից, արտաքին ներբանից: Արտաքին ներբանը պատրաստվում է ջերմապլաստիկ ռետինե (термопластичный каучук) հումքից: Երեսամասը պատրաստված է հարթ և նախշով /նակատով/ կաշիների համադրությամբ: Հետնամասը բաղկացած է 2 դետալներից՝ կաշվից և արհեստական թավշյա կտորից: Հետնամասում, ճիտքի վերևում տեղադրված է 2սմ լայնությամբ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ռեպս, որի շնորհիվ կոշիկի հագնելը կստացվի հեշտ և արագ։ Հիմնական ներդիրը բաղկացած է իրար սոսնձված 2,0-2,2մմ հաստությամբ կոշիկի համար նախատեսված ամբողջական ստվարաթղթից, որը շարունակվում է մինչև թաթը և որի մեջ դրվում է մետաղական սուպինատոր։ Քթամասը և կրնկամասը կոշտ են և ունեն լրացուցիչ կոշտություն ապահովող պինգ-պոնգ տեսակի թերմոպլաստե նյութից ներդիրներ՝ հարվածներից և դեֆորմացիայից ապահովելու համար, որոնք լրացուցիչ երեսպատված են միկրոֆիբրայի և պոլիվինիլխլորիդի նյութով, կամ համանման, ինչը կապահովի լրացուցիչ պաշտպանություն մեխանիկական վնասվածքներից և քերծվածքներից, ընդ որում քթամասում առնվազն 0,8մմ հաստությամբ, կրնկամասում՝ 1,5մմ։ Կաշվե դետալները հակառակ կողմից մշակվում են տաքացվող սոսնձով գործվածքով, որը կտա երեսամասին հավելյալ ամրություն և կիաղորդի չափավոր ծավալային կայունություն։ Հետնամասի և |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | լեզվակի եզրով, երեսամասի և միջնատակի միջև տեղադրված է առաձգական ծակոտկեն սինթետիկ կտոր, որը ձգվում է ճիտքի ամբողջ երկայնքով՝ կոճերից վերև։ Կոշիկի վերնամասի ամբողջ եզրը կարվում է դեպի ներս ծալվածքով։ Կողամասերը քթամասի հետ կարվում են երեքական կարով, կաղամասերի և հետնամասի կարերը՝ երկուական։ Կոշիկը ներսամասից բացվում է պլաստմասե YKK կամ նմանատիպ սև գույնի շղթայով: Շղթայի ամբողջ երկարությամբ առկա է կաշվե ներդիր: Առաջամասի կենտրոնական առանցքով տեղադրված են 5 զույգ մետաղական կաճանցքեր և մեկ զույգ կեռիկներ։ Հանովի-դնովի ներդիրը պետք է պատրաստված լինի բնական կաշվի և պոլիուռետանային հումքի համադրությունից, որի ամրացման եղանակը՝ միաձույլ, ինչը կապահովի հավելյալ ամրություն և երկար օգտագործում։ Առաջամասի, միջնամասի և հետևամասի եզրերը միացված են ներբանին՝ սոսնձման եղանակով: Ներբանը |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պատրաստվում է մաշկայուն ջերմապլաստիկ ռետինե հումքից, ընդորում` • քթամասի հաստությունը` առնվազն 17մմ հետքով, • Կրնկամասի հաստությունը` առնվազն 25մմ հետքով, • հետքի /նախշի/ խորությունը կրնկամասում 7,0-7,5մմ, թաթի հատվածում 4,5-5,5մմ: Կապումն իրականացվում է սև գույնի քուղերից պատրաստված սինթետիկ քիմիական մանրաթելից` յուրաքանչյուրի վերջույթները թերմոմշակված են: Երկարությունը` 115սմ: Կոշիկի կաղապարը պետք է համապատասխանի ԳՈՍՏ 3927-88-ի պահանջներին: Կարերի ամրությունը համաձայն ԳՈՍՏ 447 պետք է լինի 115Ն/սմ /կամ 11,5կգ/սմ/: Արտաքին տեսքը` լուսանկարին համապատասխան: Հաստատված նմուշը տրամադրվում է պատվիրատուի կողմից: Փաթեթավորումը` ստվարաթղթե արկղերով` անցքերով, արկղերի մեջ 10 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով տրամադրվում է լաբորատոր ստուգման եզրակացությունը: Չափսերը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարումից հետո հայտնաբերված խոտանի դեպքում Մատակարարը պարտավոր է Պատվիրատուի պահանջով դրանք վերացնել: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-ՀՆԴՁ/2024/Հ-13 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 3 | | | | | |
| | | | | | |